յայնմ մենաստանի, որ էր դուստր տիւրզէի։ Խնդրեցաք և զնա տեսանել. զոր զնացեալ կոչեցին. և կացուցեալ յետոյ վանդակին՝ բացին զձեռս նորա, որք կապեալ էին կտաւով. և տեսաք վէրս ի ձեռս նորա հանդերձ չորացեալ արեամբ։ Սակայն նա ոչ գիտէ զպատճառ վիրացն այնոցիկ, այլ կարծէ եթէ ցաւ է բնական. իսկ և այլք ոչ պատմեն նմա վասն նորա պարզմտութեանն և մանկութեան. այլ յորժամ կոչեն զնա ի ցուցանել այլոյ, եթէ քահանայք են կամ կրօնաւորք, ասեն ցնա. երթ առ նոսա, զի արասցեն աղօթս ի վերայ քո, և բժշկեսցիս ի վիրաց քոց։ Իսկ եթէ են աշխարհականք, ասեն. եկեալ են որք գիտեն զբժշկութիւն, երթ առ նոսա, և ցոյց զվէրսդ, զի թերևս տացեն սպեղանիս և բժշկեսցիս։ Ցետ խօսելոյ մեր ընդ կուսին՝ իբրև կամեցաք հրաժարիլ, բռնադատեցին ի ճաշ, և ապա արձակեցին։...

Ցամի տեառն, 1769 յօգոստոսի 22
ի Հալէպ

Նուաստ ծառայք
Հ. Մանուէլ, Հ. Սուքիաս և Հ. Միքայէլ

ՄՂԱ.

Ներկայ վաւերագրէն կ՝իմացուի որ Հայ գաղթականութեան հիմը կը դրուի ի Թրիեստ ճիշդ այս թուականիս, յորում հայասէր կայսրուհին Մարիամ Թերեզա անուղղակի հրաւէր և դիւրութիւն կու տայ հայոց՝ գալու բնակելու հոն։ Ճիշդ այդ վախճանին համար է որ ան նախապէս կը հաստատէ մեր նամակագիրը իբր Թրիեստ քաղաքի հայ քահանայ։

Գերյարգելի Տեառն Տեառն Ստեփաննոսի մեծի Վարդապետի
և արժանաւոր Աբբայի խնդալ ի տէր

... Կայսերուհին ազատ կացոյց զքաղաքն Դրիէսդէին վասն բազմամարդ առնելոյ զնա, այսպէս առ այս վախճան խորհեցաւ հաստատել ի Դրիէսդէ և զհայ քահանայ մի, զի զուցէ եթէ իցեն յազգէն հայոց, որք կամիցին գալ, և բնակիչ լինիլ ի Դրիէսդէ, վասն պակասութեան քահանային մի արգելցին ի գալոյ. վասն այսորիկ ահա առաքեաց զիս ի Դրիէսդէ տալով ինձ զերկու հարիւր ֆիորինս եկամուտ յամին բացի ողորմութենէ պատարագին մինչև զերիս ամս. զի տեսանելով, թէ յաճախիցին հայք ի գալ ի Դրիէսդէ ի մէջ այսչափ ժամանակիս, ունիցիմ միշտ զայն երկու հարիւր, կամ աւելի ևս եկամուտն։ Արդ տեսանելով Գերյարգելութեան ձերոյ զհաստատիլն աստ հաց մի մշտնջենական քահանայի միոյ մերոյ գալստեամբ ազգայնոց ի Դրիէսդէ, հաճեսցի ուրեմն աղաչեմ ըստ նախանձու բարեաց իւրոց օգնել առ այս, և գրել յարևելս առ միաբանս Գերյարգելութեան ձերոյ, զի յորդորեսցեն զմերայինս առ ի գալ, և հան[գ]չիլ ի Դրիէսդէ ցուցանելով նոցա զազատութիւնն, զպատշաճաւորութիւնն վաճառականութեան և զդիւրագին ապրուստն տեղւոյն, ունելով և զմխիթարութիւնն իւրեանց հոգևոր որչափ ես ապրիցիմ. և յետ մեռանելոյն իմոյ կարեն ապահով լինիլ մերայինքն ունիլ ի քահանայ իւրեանց ոմն ի միաբանից Գերյարգելութեան ձերոյ՝ ծանուցանելով իմ՝ ի ժամանակի իւրում դրանն կայսերական զարդիւնս վանականաց Գերյարգելութեան ձերոյ ի յղել զհայս աստ՝ և զարժանաւորութիւն լինելոյ ի ձմերայնոց աստ՝ ի քահանայ հայոց։...

Նուաստ ծառայ Յոհաննէս արիման
1769 ի սեպտեմբերի 12 քահանայ անարժան
ի Դրիէսդէ